

H. P. C. S. L'union des

ՀԱՅ

ՄՎԱՆՈՒՏ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Գ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
SCOUTS ARMÉNIENS



ՀԱՍՅԷ - Խորասանձեան Խան, Թի. 26, Սիրէճի և Գոլիս
ADRESSE - Khorassandjian Han, 26, SirKédji, Constantinople

Հեռագրայն Ար. 2146 | ԲԱԺՆԵԳԻՆ | Telephone ճե. 2146 |

Պոլիս և Գալատի Տրեզ. 22.120
Արտասահման . Տր. 15
Ամերիկա . Տր. 150

Բ. ՏԱՐԻ ԹԻ 10

ՆՈՅԵՄԲԵՐ 1921

Սկսուածսկան միջավայրը շատ բարձր բարոյականով մը շրջապատուած է՝ ան ուղիղակի մարդկային խիղճը կը մարտազործէ եւ մտածելակիրպը կը բարձրացնէ:




Համալսարան

Հայ Սկաուտներ բանակուածի մէջ 1920 ին

ԽԱՂԱՂ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Յունիսին Լոզանի մէջ գումարուած Միջազգային Ողիմպիական Յանձնախումբը 1924 ի Ողիմպիական խաղերուն նախաձեռնութիւնը և կարգադրութիւնը Ֆրանսայի վտանհեցու։ Այս՝ ֆրանսայի համար խիստ հաճոյալի թուեցաւ։ 1919 ին նոյն խաղերուն կարգադրման իր թիկնածութենէն սիրայօժար հրաժարած էր ի նպատակ հերոսական Պէլճիգայի, որ փափաք յայտնած էր թէ՛ սոյն խաղերը իր երկրին մէջ կատարուէին։ 1924 ի ողիմպիականները սարքելու շատ մը մրցակիցներ ունեցաւ ֆրանսա և հպարտացաւ տեսնելով որ այդ ընտրութիւնը ընելու իրաւունք ունեցող 24 երկիրներէն 18 ի նպատակ Ֆրանսայի որոշում տուին։ Ֆր-



Գուլէի սրբանոցի մարզիկները

բանսա՝ այս համակրանքը և վտանգութիւնը պատերազմի ընթացքին իր ծառայութիւններուն հանդէպ երախտազխտական արտայայտութիւն մը նկատեց և կարծեց որ այսպէսով կ'ուզուէր քաջալիւրել այն ֆիզիքական ընդհարձակ շարժումը որ ստեղծուած էր ֆրանսայի մէջ և հուացուցած էր շատ մը կարող մարմնամարզիկներ։

Ֆրանսայի մէջ ֆիզիքական կրթութեան յանկարծական տարածումը հաճելի զարմանք մը պատճառած է զինքը մօտէն չճանչցողներուն։ Բացօդեայ սքօններու այս շարժումը լակ ընդօրինակութիւն մը, անգլիականին հետեւողականութիւն մը չէ։ Անոր պատճառները աւելի խորունկ են և արդիւնքները՝ անական։ Ֆրանսայի երիտասարդութիւնը կ'սկսէր խեղդել իր բոլորովին ուսմանքի նուիրուած կրթական գրութեան մը պատճառով, որ միայն իմացա-

կան աշխատութիւնը կը գովարանէ՝ մրցումներ և մրցանակներ հաստատելով, և անտես կ'առնէր, նոյն լակ կ'ատէր, այն բոլորը որ մասնային մարզանքներու հետ առնչութիւն ունէին։ Իրը թէ այդ գրութիւնը նպատակաւոր կերպով ընդգրկուած ըլլար ազուն խաղալու, վաղելու, իր սլօք, առագութիւնը, եսանդը զօրացնելու ընական պահանջքը խորտակելու համար։ Գարոցական ուսուցիչներու ազդեցութեան իրը արդիւնք, մարմնամարզի համար տրուած մրցանակները աւանդաբար արմարներու վարձատրութիւն նկատուած՝ հետեւաբար նախակրթարանները և բարձրագոյն վարժարանները տխուր զօրանոցներու վերածուած էին, որոնք իրենց հանգիստի պահուն միայն նեղ նրբանցքներու մէջ վեր վար պրտաւելու պատեհութիւնը ունէին և հինգչարթի օրերը պտոյալի կ'ելլէին, իրենց ետին ունենալով անամիա ուսուցիչ մը։ Համարտարաններու երջանասարգութիւնը զգալով որ այս գրութիւնը զիրենք կ'սպաննէ, առողջապահական յեղաշրջումի մը ձեռնարկեցին և այսպէս ստեղծեցին սքօններու և ֆիզիքական կրթութեան շարժում մը՝ որուն անդիմադրելի յաջողութիւնը ոչ միայն Ֆրանսայի համար խաղաղ և օգտաշատ յեղափոխութիւն մըն է, այլ նաեւ ընկերական և միջազգային կարեւորութիւն ունեցող ահագին քայլ մըն է։ Ֆրանսա ոչ թէ իր անգլիասիրութենէն մղեալ այս շարժումը կ'ընդօրինակէր, այլ իր բարեկամ երկրին առողջութեան կը հիմնար և կը նախանձէր, կ'ուզէր հասնիլ նեղուցին միւս կողմը դռնուող առողջ և կատարեալ երիտասարդութեան բարձրութեան, հասնիլ այնպիսի կեանքի մը, որուն հաճոյքները և առաւելութիւնները իրեն վաղուց ծանօթ էին արդէն։


1888 ի առններն էր սր Ֆրանսայի երիտասարդութիւնը Մամուլին մէջ երեւցող վիճարանութիւններէն անգլիական կրթական գրութեան հմայքներուն տեղեկացաւ։ Այս բանավէճի պարագլուխներն էին՝ Բատլայ կրուտէ, Պարոն Բիէր ար Գուպերթէն և Տրիմ Զիլբան Լակրանտ։

Բացօդեայ սքօններու մասին ուսումնասիրութիւններ ընելու համար Անգլիա դայած

Պ. Ժօրժ ար Աէն-Գլէր երբ ֆրանսա վերադար-
ցաւ, նախ Թրանսայի Բէյալիկ Գլիւպը և յի-
տոյ Արաք Թրանսիէն աթլէթիկ միջոցա գա-
զափարը մարմնագոյնը: Պ. Ժօրժ ար Աէն-Գլէր
վերոյիշեալ երկու տեղումները ձուլելով մի-
ութիւն մը կազմեց և 1878 ին իւնիսի սե Սոսի-
էրի Թրանսիէ սը Գուստ-ա-Բիէ անունով միու-
թիւն մը հիմնեց:

Բասկալ Կրուսէ հիմնեց Ֆիզիքական Կրթ-
թութեան Ազգային Դաշնակցութիւնը, իսկ
Բիէր ար Գուպէրթէն հաստատեց՝ Ֆիզիքական
Մարզանքներու Տարածման Կոմիտէն: Ասոնցմէ
առաջինը տարեկան սքօշներու սկսաւ, տեսակ
մը համալսարանական Ուլիմպիական խաղեր,
որուն կը հրաւիրուէին Թրանսայի բոլոր լիւս-
ներուն աշակերտութիւնը, մինչ Կոմիտէն 1889ի
Բարիդի Յուցահանդէսին մէջ սարքեց Ֆիզի-
քական Կրթութեան Միջազգային Գօնկրէսը,
ուր ամէն տեսակ մրցումներ տեղի ունեցան:

Այս մրցումները շատ
մը մրցորդներ հը-
մայեցին և համա-
լսարանի սովորոյթ-
ներուն վրայ մեծ
ազդեցութիւն մը
ուէ եցան: Մինչ մէկ
կողմէն երիտասար-
դութիւնը կրթա-
կան նեղ օրէնքնե-
րուն դէմ կ'մտա-
տանար, միւս կող-
մէն կրթական վաս-
տակաւորները ի-



1921 ի ողիմպիականէն.

րենց աւանդութիւններուն կառչած՝ կ'ընդգի-
ժանային: Սակայն այս երիտասարդները, աշ-
քերնին ուղղած դէպի սպորտան, հաստատ
մնացին իրենց նոր շարժման մէջ և մարմնա-
մարզական միութիւններ կազմեցին: Առաջին
երեքը կազմուեցան 1888 ին էջօլ Ալգասիէն,
էջօլ Մօնօ և Լիսէ Լազանայ, իսկ միւսները
այս երեքէն ծագում առին:

Իրենց դիրքը զօրացնելու համար արլի-
քիզմի ջերմ սլաշտպանները միցան: Բասոզալ
Կրուսէի դաշնակցութիւնը լուծուեցաւ և
Գուպէրթէնի կօմիտէն Ժօրժ ար Աէն-Գլէրի
Միութեան ձուլուելով Արլիքիկ Սքօքսերու Թը-
րանսական Ընկերութիւններու Միութիւնը կազ-
մուեցաւ, որուն ենթակայ են բոլոր Գլիւպները
և դպրոցական միութիւնները և ֆրանսայի

երիտասարդութեան շահուն համար բոլոր բա-
ցօղեայ սքօքսերու.—արլիքիկ, Ֆուրպօլ, գրիէր,
լոդալ, րենիս—վերին վարչութիւնը ստանձնեց:

Մինչև հոս դատը՝ արդէն իսկ կէսէն
աւելին շահուած էր: Միայն համալսարանը կը
մերժէր փոխել իր յայտագիր-ծրագիրը, թէև
այսօր ալ լիւսներու մէջ յարմար ֆիզիքական
կրթութիւն մը չեն տեսներ, սակայն վարժա-
րաններէն և զօլէթներէն դուրս արլիքիկ գլիւպ-
ներու դպրոցական ընկերութիւններու միանա-
լով բացօղեայ սքօքսերու և ֆիզիքական կրթ-
թութեան բարոյական առաւելութիւններուն կը
տիրանան, որոնք մարմինը կը զօրացնեն և
նկարագիրը կը ներդաշնակեն:

Առանց յայտադումի, Պարոն Բիէր ար
Գուպէրթէնի և Պ. Ժօրժ ար Աէն-Գլէրի միջո-
ցով Անգլիոյ հետ սքօքսական յարաբերութիւն-
ները սկսան: 1893 ին Բրիլլիի ֆրանսական
առաջին միութիւնը Անգլիոյ անցնելով երկու

մրցումներ ըրաւ:

Այս տեսակ մի-
ջազգային հանդի-
սումներէ բազուած
փորձառութիւննե-
րու շնորհիւ ֆրան-
սական րեզիլի կող-
մակ էր պօսթիւնը
կատարել գոր-
ծուեցաւ: Արգարե,
բացօղեայ սքօքսերը
աշխարհի ամենա-
մեծ խաղաղիչ զոր-
ծօնները ըլլալու

տանձնուած են և պատիւ պարոն Բիէր ար
Գուպէրթէնի, որ իր յատկատեսութիւնովը
Գօնկրէսը սարքեց և որ 1894 ին արդի ողիմ-
պիական խաղերուն կեանք տուաւ:

Ֆիզիքական Պարսաւորիչ Կրթութիւնը

Պատերազմէն ի վեր Թրանսայի մէջ ֆիզի-
քական կրթութիւնը և բացօղեայ սքօքսերը
հսկայ քայլեր առած են: Արգարե սքօքսերու
գնահատելի արդիւնքները փաստացիօրէն պա-
տերազմի ընթացքին ի յայտ եկան: Ճակատը
միշտ մարդ զրկելու համար անհրաժեշտ եղաւ
հաւաքել այնպիսի մարդիկ, որոնք պահան-
ջուած ֆիզիքական կրթութիւնը չունենալով,
հայրենիքի պաշտպանութեանը համար սկիզբ-
ները դէնք կրելու յարմարութիւնը չունէին:

Յետոյ զարմացմամբ տեսնուեցաւ որ մէկ քանի ամսուան բացողեայ ֆիզիքական կանոնաւոր մարզանքէ վերջ այդ տկարակազմ նկատուածները՝ պատերազմի նեղութիւններուն և դժուարութիւններուն կրցան տոկալ: Այս պոռայող իրողութեան ի տես անհաւատները խանգաւառութեամբ՝ ֆիզիքական կրթութեան նուիրուեցան և անգամ մը որ վտանգը անցած էր, այդ մեծ գասէն օգտուելու զեցին:

Ասոնց չնորհիւ, կարելիութեան սահմանին մէջ, ֆիզիքական կրթութիւնը Ֆրանսայի մէջ օրէնքով պարտաւորիչ պիտի ըլլայ:

Կարգ մը դժուարութիւններ յարուցին այն մարդիկը, որոնք կը կարծէին թէ պատերազմի ընթացքին գրի առնուած այս օրէնքը զինուորական ծառայութեան մը պատրաստութեան բնութիւնը ունէր: Սակայն ֆիզիքական կրթութիւնը և բացողեայ սքօրները նպատակաւէա չեն ըրած զինուորական ծառայութիւնը, և որ ամէն տեսակ մարզանքով ձեռք բերուած կարողութեան մը աւժամեայ ցուցադրութիւնն է: Սքօրներուն բուն գաղափարականն է՝ արտադրել առողջ, ուժեղ, ինքնավստահ, հստատաբանուող ոգի ունեցող եւ ֆիզիքական, բարոյական եւ իմացական տեսակետով հաւասարակեիւ մարդիկ, անշուշտ կարելիութեան սահմանին մէջ: Տարակոյս չկայ թէ այսպիսի մարդիկ, ինչպէս որ պատերազմի ընթացքին տեսնուեցան, բնականաբար լաւ կուտղներ ալ կրնան ըլլալ:

Ֆիզիքական պարտաւորիչ կրթութեան օրինադրիժը 1921, մարտ 24 ին խորհրդարանին և ձերականոյտին կողմէ ընդունուեցաւ: Սակայն գործադրութեան չգրուեցաւ որովհետեւ ելամտական նախարարութիւնը այդ օրինադրիժին անտեսական պահանջներուն տակաւին գոհացում չէ կրցած առ: Այդ ծրագրին նպատակն է երկու տեսերու համար ալ ֆիզիքական կրթութիւնը պատրաստել, աղոց համար վեցերորդ տարիքէն սկսեալ մինչեւ անոնց նաւատորմիկ կամ բանակ մուտքը և աղջիկներու համար ալ՝ նախնական և երկրորդական կրթութեան ընթացքին: Այն սլաքի որ իրենց կրթութիւնը սան մեջ կ'ստանան հաւասարապէս պատար որ եւն հնազանդիլ օրենքին տարաբարութիւններուն: Ամէն փոքրիկ՝ անձնական գիրք մը պիտի ստանայ, որուն մէջ պիտի արձանագրէ սկիզբէն մինչեւ զինուորական ծառայութեանն արձակուած թուականը տեսած իր ֆիզիքական

կրթութեան մանրամասնութիւնները: Ամէնէն կարեւորը այն է թէ՛ պէտական ծառայութեան մէջ մտնելու համար կրթութեան մասնակցելու իրաւունք պիտի ունենան միայն այն քրտնացիները, որոնք ձեռքբերին պիտի ունենան իրենց հետեւած ֆիզիքական կրթութեան վերոյիշեալ կանոնաւոր վկայագիրերը:

Այս հիանալի օրէնքը գործադրութեան զնելու համար կարգ մը մարզիչներու պէտք պիտի ըլլայ, և ասոնք ալ հարկէ որ բարձրագոյն կրթարաններու մէջ ուսանին: Քաղաքական հաստատութիւնը, ժուան վիլի վարժարանը



մարմնամարդի ծովային վարժարանը և ֆիզիքական կրթութեան հանգային կեդրոնները, մարզիկներու պատրաստութեան անընթացաբար զարգացող իրենց միջեւ պիտի բաժնեն: Նըմանապէս ծրագրուած է կազմել Բա

ճառի կեանքը Հալիլի բանակումէն 921 ցողեայ Սքօրներու Ազգային պաշտօնատուն մը, պետական կազմակերպութիւն մը՝ որ իր վրայ պիտի առնէ ֆիզիքական կրթութեան բոլոր հոգը, սակայն այնպէս կը թուի որ ստիկա առայժմ արգելքներու պիտի հանդիպի, մասամբ տնտեսական դժուարութիւններու և մասամբ ալ միջնահանգային անորոշութիւններու պատճառով:

Տեսեալական Պահանջ

Տարակոյս չի կայ որ օրէնքին գործադրութիւնը բաւական ծախսի գուռ պիտի բանայ և այս ընդարձակ ծրագիրը յաջողապէս կարելի է գործադրել մի միայն, եթէ կեդրոնական կազմակերպութեան մը ձեռքին յանձնուի: Այս պիտի նշանակէ որեւէ նախարարութեան պիտեմէն մաս մը դրամ քաշել: Սակայն, գէթ ներկայիս որոշ է թէ այդ օրէնքը 1922 ին գործադրութեան պիտի դրուի և ստիկա՝

համալսարանական և վարչական փոփոխութիւններու պատճառ պիտի գտնուայ, բացողեայ վայրերու շինութիւնը կամ հայթայթումը, լաւ կազմաձեւերով մարմնամարզարաններու կառուցումը ժամանակացոյցներու փոփոխումը եւ այլն:

Այսչափ՝ ֆիզիքական կրթութեան համար:

Բացողեայ սքօլները տարբեր հարց մը կը ներկայացնեն և կառավարական կազմակերպութիւնը ինչ ձեւով ալ ըլլայ՝ ինք միայն կրնայ աջակցել որ՝ աթլէթիկ միութիւնները իրենց գոյութիւնը պահեն անոնց հայթայթելով հարկ եղած հողերը եւ այլն:

Սքօլները ազատ պէտք է ըլլան, մինչ մէկ կողմէն կարելի է պարտադրել ուր ամեն երիտասարդ ֆիզիքական կրթութիւն մը տեսնէ, սակայն կարելի չէ ամենուն պարտադրել որ կուսմարտութիւն ընեն, ֆուրպոլ խաղան եւ կամ թէ ծովային խաղերու մեծելին:

Ֆրանսա եւս բացողեայ սքօլներու մէջ բաւական կազմակերպուած է: Մինչեւ 1920 յունիս ամիսը, արիւրիկ խաղերը միակ Միութեան մը ինքիօն տեսիլէր: Ֆրանսիոյ սք Եքօ Արիւրիկի հակակշիւն տակ կը գտնուէին, սակայն Յուլիան և Օգոստոսին այդ գրութեան վերջ դրուեցաւ և անոր տեղ իւրաքանչիւր սքօլներու համար անջատ կազմակերպութիւններ հաստատուեցան, որոնք միանալով կը կազմեն Գովիթե Նասիօնալ տէրք, որ նոյն ատեն ֆրանսական ողիմպիական կոմիտէն է:

Ֆրանսայի մէջ ներկայիս անջատ միութիւններու թիւը 26 է, որոնց պէտք է միացնել տարբեր ութը միութիւններ ևս, ինչպէս Աեքօ Գիլպը, Օքօսօլիլ Գիլպը և Արուրիկներու Միութիւնը:

Ֆրանսայի մէջ երեւցած յառաջդիմութիւնները Անվերսի մէջ ի յայտ եկան: Այդ յաջողութիւնները ֆրանսացիներու համար պատրանքներու ծնունդ չեն տար, հակառակ որ շատ գործ տեսնուած է, տակաւին կատարուելիք ահագին աշխատութիւն կայ: Հին աւանդութիւնները մէկ օրէն միւսը կարելի չէ վերցնել: Սակայն ժամանակը և բնական պահանջը հարկ եղած յեղաշրջումը երեւան պիտի բերէ: Ֆրանսացիներու ամէնէն աւելի պէտք ունեցածը խաղալայրերն են:

Ֆրանսացիք՝ Անվիլան կը կոչեն սքօլի Մէքքէն և բաւական յաջողութեամբ կրցած են

հետեւիլ անոնց և լաւագոյն արդիւնքներ ձեռք բերելու մեծ յոյսեր կը տածեն:

Թայմը

Թարգմ. Վ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Մ.— Ֆիզիքական կրթութեան ֆրանսական այս պետական ծրագիրը բարգմանաբար ներկայացնելով, յոյս ունինք թէ վաղուան հայկական պետութիւնը կազմուցներ լսարաններու, դասարաններու քով անպակաս պիտի ընեն մարզարանները, լաւ առաջնորդներով եւ լայն պիտեսեններով օժտուած: Կ'արժէ որ Հ. Մ. Բ. Մ. քաղցին պատրաստ մէկ քանի մասնագէտ մարզիկներ:

ՆՈՅՆ



Անկախ կարծիքներ

Այս ԽՈՐԱԳՐԻՆ տակ պիտի հրատարակենք այն բոլոր գրութիւնները՝ որոնք պիտի վերաբերին մեր շարժումին բացառական կազմուցուն: Պիտի ինդրենք մեր բարեկամներէն որ հանին իրենց բոլոր թեր ու դէմ կարծիքը յայտնել, մարդական և սկստական շարժումի մասին:

Ստորեւ կուտանք մեր յարգելի աշխատակից և Հ. Մ. Բ. Մ. ի գործին անդամներէն Պ. Յ. Թ. Հինդլեանի մէկ գրութիւնը որ շատ լուրջ հարց մը կը յուզէ և իրաւացի Արդեօսօլ մը կը վերջացնէ: Պատրաստ ենք այս գրութեան արուելիք լուրջ պատասխանները հրատարակել: Ծ. Խ.

ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐԸ ՍԳԱՆՉԵԼԻ ԵՆ ԲԱՅՅ...
Օգոստոս 7

Անհանգստութիւն մը բոլլ չի տար ինձի՝ ներկայ ըլլալ Հ. Մ. Բ. Մ. Սիլիսարի Մանուհիլիին Ողիմպիական մրցումներուն: Բարեբաղդաբար, կայ երեւակայութիւնը, մարզուն երջանկութեան — թեպէս նաեւ դժբաղդութեան — այդ ամենանգօր ազդակը, որ սեմեակիս պատերուն մէջէն մանրամասնօրէն կը պատկերացնէ ինձի մրցումները:

Անա մրցավայրը, Մանուհիլիին կամփին եւ յարատե ճիգերուն շնորհիւ՝ պէտքերուն պատշաճ անցուցում եւ կերպարանափոխ եղած ընդարձակ գեթին մը, զոր Հ. Մ. Բ. Մ. Սիլիսարի մասնաճիլիին տրամադրութեան տակ դրած է ազնիւ Հայ մը: Իտալը իրականացնող կամփ. վեհանճնութեան մեայ. այս երկու պատկերները՝ ընդելուգում՝ կը ներկայանան ամենէն առաջ երեւակայութեան առջին: Ու մրցավայրը կ'արբնցրնէ պատ-

կերը խաղաղալոյսին, ուր երիտասարդներ, ա՛յնքան
օգտակար, առողջապահիկ եւ բարոյական կեր-
պով կը գործածեն իրենց մարմնական ոյժերը:

Ահա՛ տղաք, անձնագրապատի սիրուն խոր-
հրդապատկեր: Ահա՛ վագրերը, հեծելանիւով
արշաւանները, զանազան տեսակ ոտնուները,
զնդակարձակութիւնը, նիզակարձակութիւնը, քս-
կաւառակարձակութիւնը: Մրցակցութեան ոգին
ծայր սասիեան յարուած է, հարակուած՝ յաւ-
խոյսի հոգեբաշխ բացազանչութիւններով, որոնք
նախապիտուած մրցակիցի մը հասցէին կ'արձակ-
ւին՝ Սղեմդորի մը նախանձը շարժող ձայնով մը:

Ու ծափահարութիւններ մոլեգրին, կեցցեցներ,
հուրաններ:

Ի՞նչ կը ծափահարեն: Շատեր կը ծափա-
հարեն նարսարութիւնը. ոմանք ալ — անոնք որ
խնասաստերի եւ բարոյագէտի յառնուածք ունին՝
կը ծափահարեն կոբովը, անպատեալ յաջողելու
աննկուն յամառ կամքը: Հասած է երանութեան
այն վայրկեանը որուն արտաքին կ'ապաստեն
յայտակարարները, ընդունելու համար մրցանակ-
ները իրենց կարծեհեռուն վրայ:

Հանդեսը աւարած է: Եւեռակայութիւն
ալ իր դերը աւարած է. անոր աչեւնովը տեսայ,
սեւեռակիս մեջէն — նեք սիրական սեւեռակ անխ-
նացեալ — այն ամեն բան զոր պիտի տեսնէ՝
էրէ առողջական վիճակս բոլլ տուած ըլլար
ինձի հանդիասեսս ըլլալ մրցավայրին մեջ:

Սցեւելոյք կ'ըլլալ երեւակայութիւն՝
ուղեղ-հոգիիս բեմին վրայէն, իր տեղը տալով
խորհրդածութեան:

Ու կը մտածեմ.

Գարեհով, մարմինը անգոսնելի վերջ՝ ինպաս
հոգիին, արդեօք հակառակ ծայրահեղութեան մը
մեջ չե՛նք ինկած, մարմինին նուիրելով ամեն
պատիւ ու հոգածութիւն՝ ի վնաս հոգիին, մոռ-
նալով թէ՛ էրէ առողջ մարմինը պայման է
առողջ միտքի համար, միտքն է որ կը շինէ մար-
մինը. մոռնալով, ամեն պարագայի մեջ, թէ
մարմինին եւ հոգիին ներդաւնակ մշակումով
միայն կարելի է ապահովել մարդկային ար-
ժեքին մեծագոյն արդիւնաբերութիւնը: Արդեօք
աւելի նիւրբ բան մը ըրած չե՛նք ըլլար, հետեւա-
բար, մրցումներ հաստատելով մարմինն եւ հոգիին
համար միանգամայն եւ *միասնաբար*, եւ մրցա-
ցանակներով փաշալերելով զանոնք որ *երկու*
մրցումներուն մեջ *միասնապէս* յաղթող հան-
դիսացած են:

Մրցումներու ներկայ դրութեամբ, արդեօք

ինպասած չե՛նք ըլլար անհասական մրցակցու-
թեան ոգիին մշակման, որ ցուալի համեմատու-
թիւններ առած է եւ կ'առնէ հետզհետէ՝ մեր
օրով: Արդեօք կարելի չէ՞ այնպիսի դրութիւն մը
ընդունիլ ուր դիմացինը ճզմելու բնագոյր հա-
րակ չի գտնէ, այլ՝ ընկերային առաքինութեանց
պատասանելու ուղիորդեան մեջ դրուի:

Արդեօք անխոհեմութիւններ եւ անգրու-
թիւններ չե՛նք գործեր ակամայ, մրցումի ընդու-
նելով եւ զուգէ հրախելով այնպիսի պատ-
մաններ եւ երիտասարդներ սրոնք ունին առողջ
սիրտ, բայց չեն վայելիւր կարգ մը ուրիշ գործա-
րաններու բոլլասու առողջութիւնը, ինչ որ երե-
ւան պիտի բերէ արեան, մեզի, եւլլն. ցնուրթիւնը:

Արդեօք... արդեօք...: Ինչո՞ւ պէտք է որ
ամենէն հրապուրիչ եւ սիրելի բաներն ալ արեւ
զփայտ *արդեօք*ը:

Յ. Ք. ՀԻՆԴԼԵԱՆ



Սիրելի Վանիւմ

Չմեռը բնդհասեց մեր սկասուական արշա-
ւանները, հազուադէպ բացառութեամբ, եւ
ստիպեց մեզ գոհանալ ամուսն արշաւներու
յիշատակովը:

Բայց ասիկա չ'արդարացներ մեր լեացած
ընթացքը եւ կը հակասէ մեր սկասուական պար-
սականութեանց: Անընդհատ գործել եւ նորանոր
յառաջդիմութիւններ ընելու է:

Սկասու մը միտք կրնայ իւ պարագայ ժա-
մերէն զոնէ օրական կես ժամ յաշկացնել
սկասուական վարժութիւններու որով արեւ զո-
հունակութիւնը կ'ունենայ զէք բան մը աւելի
սարժած ըլլալու:

Այնպիսի վարժութիւններ կան որոնք ամառը
աւելի դժուար ընել բան ձմեռը. օր.
Սկասու մը կրնայ ձմեռ ասեմ սեւեռակին մեջ.
գրօշախօսութիւնը, Մտքի այբուբենը, սպաշա-
կոյտի փարսկա կարգալը, բժեկական անմիջական
գարմանները եւլլն, սորվիլ եւ ստունց համար ալ
կարծեմ բաց օդի եւ ոչ ալ արշաւներու
պէտք կայ:

Եզրակացնելով ըսեմ թէ ձմեռը արգելք մը
չէ սկասուութիւնը լիբելու: Սիրով ձեռնդ կը
սեղմեմ:

«Իտր» խմբակի վեր-Սոսպետոյ
ԵՐՈՒԱՆԳ ԻԻԹԻԻՃԵԱՆ